որ 6-7 հարիւր տարեայ գերեզմանատուն լինի շրջակայ Ուանա-
ձէն, Թօփիշէն և Դանձակ գիւղերի, կամ մի ուրիշ անյայտացած
գիւղի։ Թարշրիս կամ Թալշրիս անունով ուխտատեղի կայ և նոր
Նախիջևան քաղաքի մօտ։

5. Դիրք գիւղում մի սրբատեղ, «Սուրբ Կօճակ» անուամբ,
թէ ինչ կը նշանակէ. չգիտեն գիւղացիք, և ոչ ես իմացայ։

6. Դեարմախան գիւղի մօտ, ծառախիտ հին գերեզմանա-
տան մէջ, քանի քարերէ բաղկացած ուխտատեղի «Խօջէյիզ»
անուամբ,- այս գերեզմանատան մէջ քանի հին խաչքարերի վրայ
կարդացինք Հայ թուականքս Ո, Զ, Պ, և Ջ. որով երևում էր,
որ վեց եօթն հարիւր տարի առաջ Հայաբնակ է եղել այս գիւղն
ու գաւառն։

7. Նոր շէն (Աշրդ Բայրամ) գիւղի մօտ կայ ուխտատեղի
«Սուրբ Ծիլիպ» անունով. բառից երևում է որ Աղուանից սրբ-
բատեղ է, որը մի հին խաչարձան է՝ կանգնած գիւղի ներքև
մի աղբիւրի մօտ։ Ժողովրդական աւանդութիւնն Սուրբ Ծիլիպին
համարում է մի նշանաւոր հոգեւորական՝ նահատակուած, ուս-
տի և մեծ բազմութեամբ ուխտ գնալով սուրբ Ծիլիպին՝ պատ-
ուում են խունկ ու մոմով և մատաղով։ Տես յերես 29։

Սուրբ Ծիլիպի խաչարձանը այնքան հին է, որ ցոյց է տա-
լի լինել 1000 տարեայ արձան. մոմից ու խնկից այնպէս սե-
ւացած՝ որ ոչ մի գիր և թուական չէ երևում։

Այս Նոր-Շէն գիւղումն 1891 թուին գտնուեց մի արծաթ-
եայ պնակ (տալերք) 3 ֆունտանոց, որը գնել էր նոյն գիւղացի
Բաղուաբնակ ծխախոտի գործարանատէր պարոն Գէորգ Միր-
զաբէկեանցն 100 մանէթով։

Այս պսակի մէջը ձուլածոյ նկարուած են ծովի ալիքներն՝
որոց մէջ ձկներ են խաղում։ Այս ալիքների միջով անցնում է
մի դիցուհի՝ նստած մի ամերկի ձիաձկան վրայ. (գլուխը ձիոյ,
պոչը ձկան) ձիոյ սանձը քաշում է մի օրիորդ. մի օրիորդ ևս
ձեռը դրել է ձիու գաւակին (թարքին). ձիու վրայ գնացող դի-
ցուհու հանդէպը ծովի եզրին կանգնած են 2 օրիորդք՝ մին
ծաղկեայ պսակը ձեռքին սպասում է դիցուհու մօտենալուն, և
միւսն փողը (զուռնան) բերանին դրած՝ փչում է՝ երեւի դի-